




## ԲԱՐՈՅԵԿԸՆ, ՈՒՍՈՒՄՆԵԿԸՆ, ԸՐՈՒՆՏԱՅԻՏԵԿԸՆ

Ե. ՅԱՐԻ 1891

Ցարեկան 20 ֆր. ամիս — 4 րոս.:  
 Վեցամսեայ՝ 6 ֆր. ամիս — 2 րոս. 50 փ.:  
 Մեկ թիւ. կտրուէ 1 ֆր. — 50 փայ.:  
 45

ԹԻԻ 4 ԱՐԻԻ

### ՈՐՍՈՐԹՆԵՆԵՆ

### ԳՊՐՈՅԱԿԱՆ

### ԲՈՒՄԵԿԱՆ ԳՊՐՈՅՆԵՐՆ Ի ԿԵՐԿԱՆ



Րթական ուղղութիւնն որ  
 կ'առնու առաստաղայ մանկութիւն  
 եւ որ այնչափ մեծ ազդե-  
 ցութիւն կը գործէ նորա բա-  
 վանդակ կենաց վրայ, ճիշդ  
 բնութեամբ համար՝ անհրա-  
 ժեշտ եւ գիտնալ նորա յա-  
 ճախան գարդոցական հաստատութեանց գրա-  
 թիւնն ու ծրագիրը: Այդ որ կարող է հաստատու-  
 նիլ, որ մանկանց գաստիարակութեան հիմն եւ  
 նորա հետզհետեւ առած զարգացումն ուղղակի  
 արդիւնքն է առաւանդարանի ծրագրին ուղղու-  
 թեանը: Աւստի գաստիարակական ոգին ճաննա-  
 լու համար հարկաւոր է նախ ճաննալ գարդոցա-  
 կան ուղղութիւնն ու ծրագիրը:

Կաւկասի մէջ հայ մանկտին երկու կարգ  
 գարդոցներու մէջ կ'ուսանի. 1. Ազգային-Եկե-

ղեցական եւ 2. Առաւել արքունի: Ներկայ  
 յոգաւածովս կ'ազնիք խաղ նախ առաւել  
 արքունի առաւանդարաններու վրայ, որոնք գրեթէ  
 բացարձակապէս անձնաւոր են ճաշատ արեւ-  
 մանայ Հայոց: Իսկ Ազգային-Եկեղեցական կու-  
 չաւած գարդոցներու վրայ, որոնք համեմատաբար  
 աւելի ծանօթ են մերայնոց, արդէ աւելի:

### Ա.

Առաւել արքունի գարդոցներն երկու ընդ-  
 հանուր կարգի կը վերանան, որ են՝ 1. Ընդհա-  
 նուր գարգացում եւ 2. Մասնագիտական կրթու-  
 թիւն: — Առաւել կարգները՝ արթնութեան  
 պաշտամարտեն (Ministère) կամ, իսպան մարմը  
 կը գրեն առաւելնէ Թարգմանիչ, « թարգ-  
 մաչողական բառարանական միջոցարարութեան »  
 (Манускриптно-словарнаго посредничества) կախում  
 ունին, իսկ միւսները զանազան պաշտամարտեններէ  
 ըստ իւրաքանչիւր մասնագիտական միջոցի, զոր  
 որ. այդ երկուստեան գարդոցները՝ Պետական կու-  
 չաւածոց (Domaines d'Etat) պաշտամարտեն, զի-  
 նաւորական գարդոցները՝ Պատերազմական, բժշկա-  
 կան գարդոցները՝ Ներքին գործոց պաշտամար-  
 տեն եւ այլն:

Ի ընդհանրապէս հայ տղայ իրենց կրթութիւնը կը  
 սկսին իրենց տնայն կամ ընտանիքի միջոցով առաւելա-  
 րանայ մէջ, եւ այդ կամ այն բացընթացքն աւարտեն  
 ետեւ եւ կամ երբեք, մասնաւոր թէ յանձնարարչեւ, ա-  
 ռանց աւարտելու կ'անցնին արքունի գարդոցները: Կան նաեւ՝  
 որոնք միայն տղային գարդոցներու մէջ կ'աւարտեն իրենց  
 ընթացքը, կան ալ այնպիսիք՝ որոնք ուղղակի առաւել  
 գարդոցներու պատրաստողական գաւառներն կը սկսին. յայտ  
 այս փոքրին երկու ընթացքը համեմատաբար այնչափ առ-  
 քանուան չէ. մասնաւոր այդմ:

Բոլոր դպրոցներն ցերեկեայ են, բայց կ'ընդունին նաև գիշերօթիկները. ուստի տարեկան վճարողը այս դպրոցներու մուտքը, (ի բաց առեալ աշնուական տղայոց [cadets] զինուորական դպրոցն, օրհորգաց ձեմարանն եւ Մարինեան [Маринское] կոշտածները), բաց է ամէն կողման՝ եւ դասանութեան տղայոց: Աշակերտաց ընդունելութեան ժամանակն է՝ իւրաքանչիւր դպրոցական տարւոյ սկիզբը: Իսկ եթէ ազատ (չգրուեալ) տեղ (vacance) կայ՝ ամէն ժամանակ կարելի է, միայն թէ նոր աշակերտը գիտնայ այն ամէնն որ իւր դասընկերներն արդէն անցած են ըստ ծրագրին: Լիկ նախնական եւ պատրաստողական դպրոցներու մուտքը ձրի է: Իսկ միջնակարգներուն վճարողը՝ Չբաւոր եւ բարի վարուց տէր աշակերտներն առանձին տնօրինմամբ ազատ կը կացցուին դպրոցական վճարքէն, սակայն այսպիսիք դպրոցին ընդհանուր թուոյն 10% են աւելի չեն կրնար: Աճարքէ ազատ են նաեւ գիշերօթիկներն, եւ այն ողջը՝ որոնց ծնողք միջնակարգ կամ ստորին դպրոցներու ուսուցիչ եւ պաշտօնատէր են, կամ 10 տարիէ աւելի գտնուած են նոյն պաշտօնին մէջ. (այս վերջինները՝ եթէ իրենց չբաւորութեան վկայագիր ներկայացնեն):

Այս դպրոցներուն մէջ կան աշակերտներ՝ որոնք արքունի ծախիւք կ'ապրին եւ կ'ուսանին. այսպիսիներն ընդհանրապէս աշնուականաց կամ տէրութեան պաշտօնէից որդիք են: Վան նաեւ զանազան ընկերութիւններու եւ քաղաքային վարչութիւններու որդեգրեալները՝ յանուն այս ինչ նշանաւոր մարդու, կամ ի յիշատակ որեւէ երեւելի դէպքի: Ստորեւ յառաջ կը բերենք արքունի դպրոցաց ընդհանուր վիճակագրութիւնը՝ պաշտօնական աղբիւրէն քաղուած:

### Ք.

ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՐԱԳԱՐԱՆՆԵՐ

#### 1. Գիմնասիոն:

Ղիմնասիոններու (ГУМНАЗІЕ) նպատակն է ընդհանուր դարգացում տալ եւ համալսարանի կամ ուրիշ բարձրագոյն կրթական հիմնարկութեանց ուսանող պատրաստել: Այս վարժարաններն 1 կամ 2 նախապատրաստական եւ 8 հի-

մնական դասարան ունին, իւրաքանչիւրը մի տարւոյ ընթացքով: Ուսմանց ծրագիրն այս է: Ա. Պարսպարեան, 1. Կրն Ռուսաց, Հայոց, Կաթողիկեայ եւ Մահմետականաց. (այս վերջինները միայն այն քաղաքացի մէջ՝ որ բազմաթիւ ոչ-ուստագական աշակերտք կը յաճինեն.) 2. Ռուսերէն եւ հին Սլաւ լեզու, գրականութիւն եւ արամարանութիւն. 3. լատիներէն. 4. Հին Յունարէն. 5. Մաթեմատիկայ (թուաբանութիւն, գրահաշիւ [algèbre], երկրաչափութիւն եւ եռանկիւնաչափութիւն.) 6. Բնագիտութիւն (physique). 7. Ընդհանուր եւ Ռուսաց պատմութիւն. 8. Աշխարհագրութիւն. 9. Գաղղիներէն եւ Գերմաներէն. (առնցմէ մէկն է միայն պարտաւորեալ՝ ըստ աշակերտին ընտրութեան.) 10. Այլեւբարութիւն. 11. Գծագրութիւն. եւ 12. Մարմնավարժութիւն (gymnastique): Բ. Կամարէ 1-մ ուղար, 1. Տեղական լեզուներ, (հայերէն, վրացերէն եւ Մահմետականաց լեզուներ.) 2. Երաժշտութիւն. 3. Երգեցողութիւն. 4. Պար եւ 5. Զինավարժութիւն (escrime): Քանի մի գիմնասիոններու մէջ կ'աւանդուին նաեւ լուսանկարչութիւն (ի Տփղիս) եւ օգրերեւաբանութիւն (ի Գանձակ եւ ի Ստաւրոպոլ):

Պատրաստողական դասարանի համար ընդհանրապէս Ռուսաստանի մէջ 10 տարեկանէ վեր եւ 8 տարեկանէ վար աշակերտ չեն ընդունիր, բայց Անդրկաւկասիոյ համար բացառութիւն եղած է. վան զի մեր ողջք աւելի շուտ կը հասունան, ուստի եւ 7 տարեկան հասակի մէջ կ'ընդունուին: Այս դասարանն ընդունուելու համար տղան պէտք է գիտնայ քանի մի սովորական աղօթքներ, ուսերէն պարզ գրել եւ կարգալ եւ մինչեւ 1000 Տամբել:

Գիմնասիոններ հաստատուած են Կաւկասիոյ հետեւեալ քաղաքները, որոնց տարեկան վճարքներն ալ կը նշանակենք. Տփղիս՝ 2 Գիմնասիոն, տարեկան վճարք մէկուն 50 ռբ. երկրորդին 40, (Գիշերօթիկ՝ 300 ռբ.): Քութայիս՝ 1 Գիմնասիոն, վճարք տարեկան 40 ռբ. (Գիշերօթիկ՝ 250 ռբ.): Երիւան՝ 1 Գիմնասիոն, վճարք տարեկան 40 ռբ. (Գիշերօթիկ՝ 250 ռբ.): Գանձակ՝ 1 Գիմնասիոն, վճարք տարեկան 40 ռբ.: Եկատրինոքար՝ 1 Գիմնասիոն, վճարք տարեկան տեղացիներէն 20 ռբ. իսկ օտար քաղաքացիներէն 40 ռբ.: Ստաւրոպոլ՝ 1 Գիմնասիոն, վճարք տարեկան 40 ռբ. (Գիշերօթիկ՝ 245 ռբ.):

Ք. Պարսպարեան կը նշանակենք այստեղ, աղայոց ընտանիքներէն գիւրքը, հասարակական դասակարգը, այսինքն թէ ինչ նպատակ ունին: Այս ծագումն քանի մի աստիճաններ անցնի՝ աղայական, հոգեւորական (եկեղեցական հոգ քուստ), քաղաքացի եւ քիչ քանի՝ Այս կարգերն ունին նաեւ իրենց ստորաբաժանու մներ, այսինքն երկրորդական բաժանու մները:

վլատիկաւկաս՝ 1 Գիմնասիոն, վճարք տարեկան 40 րբ. — Ընդ. ամէնը 8 Գիմնասիոն:

### 2. Պրոգիմնասիոն:

Այս դասարանները 4 Հիմնական եւ 1 պատրաստողական դասարաններէ կը բաղկանան, եւ ընդհանրապէս մի եւ նոյն ծրագիրն ունին՝ ինչ որ Գիմնասիոններն ունին՝ մինչեւ 5<sup>րդ</sup> դաս. այնպէս որ պրոգիմնասիոնը յաջողութեամբ աւարտող աշակերտը կարող է անցնիլ ուղղակի Գիմնասիոնի 5<sup>րդ</sup> դասը: Միայն Տփղիսի պրոգիմնասիոնն՝ իրեւ բացառութիւն՝ 6 դասարան ունի փոխանակ 4ի. եւ այս պատճառաւ սորա տարեկան թիւը աւելցնելու աւելի սուղ է:

Այս վարժարաններու դասարաններն ալ միամեայ ընթացք ունին:

Պրոգիմնասիոն կայ՝

Գուլիսի, տարեկան վճարք՝ 40 րբ.:

Պիտուգորսկ, " " 40 րբ.:

Տփղիս, " " 60 րբ.:

Ընդ. ամէնը 3 Պրոգիմնասիոն:

### 3. Թեոլոգիկ վարժարաններ:<sup>1</sup>

Այս վարժարաններն առանձինն նկարագիր ունին, եւ մեծապէս կը տարբերին Գիմնասիոններէն եւ Պրոգիմնասիոններէն՝ որոնք պարտաւորիչ է դասական (classique) ուսումը՝ աշակերտները Համալսարանական ընթացքին պատրաստելու համար. մինչդեռ, թեալական վարժարանաց նպատակն է՝ այնպիսի ընդհանուր զարգացում տալ՝ որ ծառայէ իսկոյն գործնական կենաց պահանջներուն եւ աւանդէ արուեստից կարեւոր (technique) գիտելիքները:

Բեալական վարժարաններն 6 դասարան ունին՝ իւրաքանչիւր միամեայ դասընթացքով եւ առանձինն պատրաստողական դասարանով: Ասկէ զատ, քանի մի վարժարաններ յատուկ արուեստական բաժիններ ալ ունին, ինչպէս՝ Թեմիրխան-Շուրայի վարժարանն ունի մեքենական-արուեստական լրացուցիչ բաժին: Երեք հասն ալ ունին օգրեւաբանական բաժիններ: Միայն երեք վարժարանք՝ այսինքն Բաքուի, Ստաւրոպոլի եւ Վլատիկաւկասի՝ կ'ընդունին գիշերօթիկներ, (տարեկան 200, 250 րբ. թոշակով.) միւսները միայն ցերեկեայ աշակերտաց համար են:

Բեալական վարժարանաց ուսումնաւարտ-

ները կ'ընդունուին բարձրագոյն արուեստագիտական դպրոցները:

Աւանդուած նիւթերն են՝ Ա. Պարտաւորել. 1. Կրօն. 2. Ռուսերէն եւ Հին Սլաւերէն, գրականութիւն. 3. Գերմաներէն. 4. Գաղղիերէն. 5. Աշխարհագրութիւն. 6. Ընդհ. եւ Ռուսաց պատմութիւն. 7. Մաթեմատիկ. (Թուարանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, երանա-կիւն չափութիւն). 8. Բնագիտութիւն. 9. Բնական պատմութիւն. 10. Գծագրութիւն. 11. Աշխրջագրութիւն. 12. Բնաբուժութիւն. 13. Մեքենագիտութիւն եւ 14. Բնաբուժական արուեստաբանութիւն (technologie chimique). Բ. Կուրսը. Հայերէն, վրացերէն եւ թուրքերէն լեզուներ, ինքեցողութիւն, Պարս, Եւրոշտութիւն, Չինականութիւն, եւ զանազան գործնական արուեստներ:

Բեալական վարժարաններ Հիմնուած են Կաւկասիոյ հետեւեալ քաղաքաց մէջ մէկ մէկ հատ.

| Տփղիս,           | տարեկան վճարք 40 րբ.: |
|------------------|-----------------------|
| Բաքու,           | " " 30—35 րբ.:        |
| Վլատիկաւկաս,     | " " 36 րբ.:           |
| Թիմիր-խան-Շուրա, | " " 15—20 րբ.:        |
| Եկաթ,            | " " 12 րբ.:           |
| Եկատերինոգար,    | " " 10 րբ.:           |
| Շուշի,           | " " 20 րբ.:           |
| Ստաւրոպոլ,       | " " 40 րբ.:           |

Ընդ. ամէնը 8 Բեալական վարժարան:

### 4. Աղիքաւորեալ վարժարաններ Գիշերի:

Այս վարժարանը Հիմնուած է արքունի «քաղաքային» կոչուած ուսումնարաններուն, (որոնց վրայ քիչ վերջը կը խօսենք), ուսուցիչներ պատրաստելու համար: Արքունի ծախիք ուսում կ'առնուն 30 աշակերտը, որոնք պարտաւորեալ են ընթացքն աւարտելէն ետեւ 6 տարի ուսուցչի պաշտօն վարել արքունի «քաղաքային» դպրոցներու մէջ: Ով որ չ'ուզէր այս պայմանին համակերպիլ, պէտք է դարձնէ վարժապետանոցին՝ իրեն աւանդ եւ արուեստին վրայ ծախուած գումարը, տարեկան 165 ռուբլի հաշուով. սակի զատ 30 ռուբլի ալ իրեւն սկզբնական տեղաւորման ծախք: Բայց շատ քիչ կը պատահէ այսպիսի դէպք, վասն զի այստեղի ուսանողները հարուստ չեն, եւ աւարտելէն ետեւ միշտ կարօտ են ուսուցչութեամբ իրենց պարուսար հոգալու: Այս տեսակ արքունի որդեգրեալներէն զատ՝ ուրիշ թոշակաւոր աշակերտներ ալ կ'ընդունուին՝ տարեկան 150 ռուբլ. վճարով. սորա պէտք

<sup>1</sup> Real (գոգ. réel) բառն, որ ի ինչ կը նշանակէ իրական, Գերմանացիք անոր ըրած են այն դպրոցներու՝ որոնք նպատակն ու ծրագիրն է իսկապէս իրաց վրայ զարգացնել աշակերտաց միտքը. այսինքն այնպիսի ուսմանը ուսանողն որ ուղղակի գործնական կենաց նպատակն է:

է վճարեն նաեւ միանուագ 30 ռուբլ սկզբնական տեղաւորման ծախքի համար, եւ 15 ռուբլ տարեկան իրբեւ ուսման վարձ: Նշեցուցանուին նմանապէս ցերեկեայ աշակերտներ միայն տարեկան 15 ռուբլ ուսումնաւարձով:

Ուսման դասընթացը 4 տարի է. հիմնական դասարաններն ալ 4 են: Աւանդուած աւարականներն են՝ 1. Կրօն, Մանկավարժութիւն եւ Ուսուցչաբանութիւն (didactique). 2. Ռուսաց լեզու եւ սլաւեան լեզուի ընթերցանութիւն. 3. Թուաբանութիւն եւ սկզբնական գրահաշիւ. 4. Երկրաչափութիւն. 5. Գծագրութիւն. 6. Պատմութիւն. 7. Վայելագրութիւն. 8. Աշխարհագրութիւն. 9. Բնական Պատմութիւն եւ Բնագիտութիւն. 10. Երգեցողութիւն. 11. Երաժշտութիւն եւ 12. Մարմնավարժութիւն:

Որպէս զէ աշակերտները գործնական կերպով կարողանան ըմբռնել իրենց տրուած ուսումն, վարժապետանոցին կից հիմնուած է «քաղաքային ուսումնարան» 3 դասարանէ բաղկացած, ուր իրենք փորձառութեամբ կ'իրաքցեն իրենց մանկավարժական դասերը: Բայց աւելի կարեւոր բաժին մ'ալ աւելցած է վարժապետանոցին: Որովհետեւ այս ուսուցիչները պիտի գործեն դաւառական փոքրիկ քաղաքներու մէջ, ուստի նոցա դասերէն դուրս կ'աւանդուին նաեւ քանի մի տնտեսական-գործնական գիտելիք, ինչպէս՝ հկարչութիւն, Հերամաքանութիւն եւ Բանջարեղբնոց ու պտղոց արուեստական շրջադուր:

Այն աշակերտներն, որ պատշաճաւոր վկայագիր կը յաջողին ստանալ, կ'ընդունին «Կառնիսի» դպրոցն «-----նէ» տիպոսը. իսկ որոնք չեն յաջողիր՝ աւելի ստորին «գիւղական» դպրոցներու մէջ պաշտօն կը վարեն:

Վարժապետանոցը 16 տարեկանէն վար եւ վատաւորը աշակերտ չ'ընդունիր: Ընդունելութեան արժանի համարանիշը համար՝ Տարեւաւոր է ունենալ վերջիշեալ նիւթոց վրայ սկզբնական ծանօթութիւն, որ առանձին ծրագրով որոշուած է: — Վարժապետանոց միայն մէկ հատ կայ, եւ այն է Տփղիսիւնը:

##### 5. Ուսուցչական դպրանոցներ:

Ինչպէս Տփղիսի Վարժապետանոցը հիմնուած է քաղաքային դպրոցներու ուսուցիչ պատրաստելու նպատակաւ, այսպէս ալ ուսուցչական դպրանոցները (séminaire) հաստատուած են գիւղական դպրոցներու ուսուցիչ հասցընելու համար: Այսպիսիք 4 հատ են Կաւկասի մէջ.

Ղազովսկայա. (Քուբանեան նահանգ) Գորի. (Տփղիսի նահանգ) Խոնի. (Քուբայիսի նահանգ) Երիւսան:

Գպրանոցները 3 հիմնական դասարան ունին միամէս ընթացքով եւ մէկ պատրաստողական դասարան: Գորիի դպրանոցն առանձին բաժին ունի պատրաստողականով միասին՝ յատկապէս մահմետական աշակերտներ ուսուցչութեան մէջ կրթելու համար: Ամեն դպրանոցին կից հիմնուած է մի գիւղական դպրոց՝ աշակերտները գործնականապէս ալ կրթելու համար ուսուցչական ոճին մէջ: Վերջիշեալ Գորիի դպրանոցը փոխանակ մէկի 4 գիւղական տիպարաւ դպրոց ունի իւր լոյժ, — զատ զատ Հայոց, Վրաց, Ռուսաց եւ Մահմետականաց համար:

Նաւանդուին հետեւեալ ուսման նիւթերը. 1. Կրօն. 2. Մանկավարժութեան գլխաւոր հիմունք. 3. Ռուսերէն լեզու. 4. Թուաբանութիւն. 5. Գլխաւոր հիմունք Երկրաչափութեան. 6. Գծագրութիւն. 7. Ռուսաց պատմութիւն եւ համառօտ ծանօթութիւն ընդհանուր պատմութեան. 8. Ռուսաստանի ընդարձակ եւ զարմեալ ընդհանուր համառօտ Աշխարհագրութիւն. 9. Բնական գիտութեանց համառօտ ծանօթութիւն. 10. Վայելագրութիւն. 11. Երգեցողութիւն եւ 12. Մարմնամարզութիւն:

Ամոնցմէ զատ կ'աւանդուին նաեւ հետեւեալ առարկաները, որ պարտաւորեալ ուսմունք չեն. Հայերէն, Վրացերէն եւ Թուրքերէն լեզուներ, Երաժշտութիւն, Հիւանդութիւն, Թղթականգմութիւն, Պարտիզպանութիւն, Գինեգործութիւն, Մեղակարուծութիւն եւ Մետաքսագործութիւն. այս ամէնն ի հարկէ՝ ոչ ընդարձակ չափերով:

Գպրանոցներու մէջ ալ աշակերտաց մեծ մասն արբուշի ծախքով կ'ապրի եւ կը դատարարակուի, որոնք պարտաւոր են ապա գիւղական ուսուցչի պաշտօն վարել 6 տարի որոշ վարձատրութեամբ: Արտաքին լոյժակաւոր աշակերտները պէտք են վճարել տարեկան 130—200 ռուբլ եւ դարձեալ միանուագ 30 ռուբլ:

Աշակերտները կ'ընդունուին 19 տարեկանէն ոչ փոքր: — Ընդունելութեան համար պէտք են ունենալ Կրօնի, Ռուսերէնի, Թուաբանութեան, Երկրաչափութեան, Աշխարհագրութեան, Պատմութեան եւ Բնական գիտութեանց նիւթերուն վրայ համառօտ ծանօթութիւններ:

Բաթում:

Կ. ՏՈՒԻՆԸՆ

(Երգեչականութիւն)

